Արձանագրություն N3

ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-81/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

30.10.2026թ.
ժամը 11^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Վարդան Գասպարյան
Անդամներ՝ Դավիթ Գևորգյան
Արթուր Դավթյան
Քարտուղար՝ Արմինե Նավասարդյան

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Վարդան Գասպարյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել **«Յունիմեդ» ՍՊԸ, «Իվաֆարմ» ՍՊԸ, «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ, «Գուդ Լայֆ Պլյուս» ՍՊԸ, «ԷՄՀԱՐ» ՍՊԸ** մասնակիցներին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

Վարդան Գասպարյան

2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 1 - **«ԷՄՀԱՐ» ՍՊԸ** -ն,
- չափաբաժին 3 - **«Գուդ Լայֆ Պլյուս» ՍՊԸ** -ն,
- չափաբաժին 4 - **«Յունիմեդ» ՍՊԸ** -ն,
- չափաբաժին 5 - **«ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ** -ն,
- չափաբաժին 6 - **«Իվաֆարմ» ՍՊԸ** -ն:

2.2 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 2-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների գնառաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված գները:

2.3 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Գասպարյան**

Անդամներ՝ **Դավիթ Գևորգյան**

Արթուր Դավթյան

քարտուղար՝ **Արմինե Նավասարդյան**